Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
օգոստոսի 22-ի N 872 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով և «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հարկային և մաքսային ծառայության մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) անդամների թեկնածուների առաջարկման հետ կապված հարաբերությունները:

2. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) նախագահը՝ ՊԵԿ-ի վերադաս մարմնի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից առաջարկված թեկնածուներից:

3. Հանձնաժողովի կազմը բաղկացած է 9 անդամից, այդ թվում՝ նախագահից և 8 անդամներից: Հանձնաժողովն ունի քարտուղար, որը նշանակվում է ՊԵԿ-ի նախագահի կողմից: Քարտուղարը չի հանդիսանում հանձնաժողովի անդամ:

4. Հանձնաժողովի նախագահը կարող է լինել հարկային կամ մաքսային ծառայող: Հանձնաժողովի նախագահ չի կարող լինել հանձնաժողովի անդամից ցածր պաշտոն զբաղեցնող ծառայողը:

5. Սույն կարգի համաձայն ՊԵԿ-ի վերադաս մարմնի՝ ներքին աուդիտի, գերատեսչական հսկողության, հետաքննության, քննչական, օպերատիվ հետախուզության, ստուգումների կազմակերպման և դիտարկման գործառույթ իրականացնող ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև հարկային տեսչությունների և մաքսատների (մաքսա-

կետերի) աշխատանքները համակարգող ՊԵԿ-ի նախագահի տեղակալները ՊԵԿ-ի նախագահին ներկայացնում են թեկնածու (թեկնածուներ) հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով: Թեկնածուն պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին՝

1) ներկայացման պահին պետք է ունենա հարկային կամ մաքսային ծառայության առնվազն 3 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ կամ պետական ծառայության մյուս բնագավառներում առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ.

2) ներկայացման պահին պետք է զբաղեցնի հարկային կամ մաքսային ծառայության բարձրագույն կամ գլխավոր պաշտոն.

3) ներկայացմանը նախորդող 2 տարվա ընթացքում չպետք է ենթարկված լինի կարգապահական պատասխանատվության:

6. Սույն կարգի 5-րդ կետում նշված առաջարկություններին կցվում են թեկնածուի ծառայողական բնութագիրը, թեկնածուի մասին հարկային և մաքսային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի եզրակացությունը, որը պետք է ներառի թեկնածուի կողմից հարկային, մաքսային և հարակից օրենսդրության, ինչպես նաև հարկային և մաքսային ծառայության մարմինների կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների իմացության գնահատականը:

7. ՊԵԿ-ի նախագահը հանձնաժողովի նոր նախագահ կամ անդամ նշանակում է գործող նախագահի կամ անդամի հարկային կամ մաքսային ծառայության պաշտոնից ազատվելու կամ այլ ստորաբաժանում տեղափոխվելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկվելու դեպքերում: Ծառայողական անհրաժեշտությունից ելնելով, համապատասխան ստորաբաժանման ղեկավարի հիմնավորմամբ, հանձնաժողովի անդամը ՊԵԿ-ի նախագահի կողմից կարող է մինչև մեկ ամիս ժամկետով փոխարինվել նույն ստորաբաժանման մեկ այլ ծառայողով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ